

ՀՏԴ՝ 930.272

ԼՈՒՅՍԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԷԹՆՈՒՆՅԱՆ ՎԱՅՐԵՐԸ

Մարգիս Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *ցեղ, երկիր, դաշնակից, Էթիունի, Ուրարտու, տեղադրություն, ցեղանուն, տեղանուն, ստուգաբանություն, արեգակնային:*

Հոդվածում պատմական Էթիունիի տարածքից բերված տեղանունների շարքի /Luša, Luhiu(ni), Durubani, Uišuši, Վանանդ, Երեւել, Փառախոտ/Փառոխտ, Փառական, Նիգ, Արեգունի/ նորովի ստուգաբանություններով գիտականորեն հաստատվում է Էթիունիի հնդեվրոպական-հայկական բնույթը:

Նախաբան Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջանները ուրարտական դարաշրջանում միավորված էին սեպագիր արձանագրություններում Էթիունի (Էթիուխի) կոչված ցեղամիության մեջ: Սա Ուրարտական թագավորության հզոր հակառակորդն էր հյուսիսում: Նրանց հակամարտությունն սկսվել էր այն բանից հետո, երբ Ուրարտուի թագավոր Սարդուրի I-ը (մ.թ.ա. 840-ական – 825թթ.) իրեն հռչակել էր «Նաիրիի թագավոր», որով բացահայտել էր ամբողջ Հայկական լեռնաշխարհն իր իշխանության տակ միավորելու ծրագրի գոյությունը: Նախահարձակ լինելով, Էթիունյան Վիտիրուխի, Լուշա և Կաթարգա ցեղերի աշխարհագորը, անցնելով Հայկական Պար լեռնաշղթան, ներխուժել էր Ուրարտուի տարածք, բայց Արածանիի վերնագավառում պարտություն էր կրել և նահանջել: Ուրարտուի և Էթիունիի միջև ռազմական գործողությունները շարունակվել էին հաջորդ հարյուրամյակում, որի ընթացքում ուրարտական արշավանքների հետևանքով ավերվել էին Էթիունյան բազմաթիվ բնակավայրեր, կոտորվել և գերեվարվել բյուրավոր մարդիկ: Այդուհանդերձ, Էթիունին վերջնականապես ընկճել և նրա բնակչությանը խալդիապաշտություն պարտադրել Ուրարտուի թագավորներին չէր հաջողվել: Էթիունցիները դիմակայել էին նաև արեգակնային լույսի պաշտամունքին հավատարիմ մնալու և սերունդներին այն փոխանցելու շնորհիվ:

1. *Լուշա ցեղի մասին առաջին վկայությունը*

Ուրարտուի Իշպուհինի արքան (մ.թ.ա. 825-810 թթ.) և արքայազն Մենուան Էթիունի ցեղամիության երեք ցեղերի դեմ Ալաշկերտի դաշտում հաղթանակի հասնելուց հետո դրա վերաբերյալ տեղում մի արձանագրություն են թողել¹: Դրա մասին պատմում է նաև Վանի մոտ՝ Հյուսնենց գյուղում նրանց թողած արձանագրությունը: Այստեղ ասված է. «Արշավեցին Իշպուհինե Սարդուրորդին (և) Մինուա Իշպուհնորդին: Վանեցին Վիտերուխե, Լուշա (և) Կաթարգա դաշնակից արքաներին Եթիունյան, (որ) փախչում էին... »²:

2. Լուշա ցեղի և երկրի տեղադրության ճշգրտումը

Արձանագրության մեջ հիշվում է նաև Անաշե քաղաքը, որտեղ հաղթական հուշակոթող էր դրվել: Այս քաղաքը կա՛մ նույնացնում են հետագա Ալաշկերտի հետ, կա՛մ տեղորոշում են նրա մոտերքում³: Այսուհանդերձ, Ալաշկերտի շրջանը չէր կարող վիտիրու(խի) ցեղի երկրի մաս կազմել հետևյալ պատճառներով:

1. Արձանագրությունները խոսում են ոչ թե դաշնակից երեք ցեղերի երկրների նվաճման, այլ նրանց արշավանքի հետմղման մասին⁴: 2. Վիտիրուխի ցեղային երկիրը մշտապես հիշատակված է Շիրակում գտնված Էրիախիի և Ախուրյանի ավազանի մյուս ցեղային երկրների հարևանությամբ: 3. Եթե Ալաշկերտի շրջանը պատկաներ Վիտիրուխի ցեղային երկրին, ապա դրանով իսկ նա կհայտնվեր Էթիունի ցեղամիության կազմում, որովհետև վերջինիս հարավային սահմանը հասնում էր մինչև Մասիս (Հայկական Պար)⁵, իսկ Ալաշկերտի շրջանը դրանից հարավ էր: 4. Էթիունյան ցեղային երկրները, դրանց թվում՝ և Ախուրյան գետի ավազանում գտնվողները, ինչպիսին էր հենց Վիտիրուխին⁶, ընդարձակ չեն եղել: Դրանցից յուրաքանչյուրը ավելի փոքր տարածք էր զբաղեցնում, քան հետագա Մեծ Հայքի շատ ու շատ գավառներ:

Վստահաբար նույնը կարելի է ասել նաև եռյակի երրորդ անդամի՝ կաթարգա ցեղի և նրա երկրի վերաբերյալ, ինչը հաստատելու է գալիս ^{I/KUR}Qatarza

¹ Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), М., 1960, № 23.

² УКН, № 20: Թարգմանությունն ու տառադարձումը Հ. Կարազոյանի (Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, այսուհետև՝ ՀԺՊՔ), հ. I, Եր., 1981, էջ 42:

³ Աղոնց Ն., Հայաստանի պատմություն. ակունքները X-VI դդ. մ.թ.ա., Եր., 1972, էջ 203, **Арутюнян Н.В.**, Топономика Урарту (այսուհետև՝ ТУ), Եր., 1985, стр. 27, 202.

⁴ Дьяконов И.М., Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500-500 г. до н. э., Եր., 1968, стр. 155, пр. 207.

⁵ УКН, №30, ՀԺՊՔ, հ. I, էջ 42, ծան. 2: **Հմայակյան Ս.**, Էթիունե երկիրը և «Վիտերուխե-Լուշա-Քաթարգա» դաշնությունը, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը (այսուհետև՝ ՇՊՍԺ), հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 16:

⁶ Վիտիրուխի ցեղային երկրի և նրա տեղորոշման մասին մանրամասն տե՛ս **Պետրոսյան Ս.**, Սեպագրային UITIRU(HI) երկրի տեղադրության շուրջ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» (այսուհետև՝ ԳԱԱ ՇՀՀԿ «ԳԱ»), հ. XXI, Գյումրի, 2018, էջ 50-59:

ցեղանուն-երկրանունը⁷: *Kat-arza բաղադրիչներից բաղկացած այս անվան երկրորդ բաղադրիչը հայերեն *արջ* բառի սեպագրային վերարտադրությունն է⁸, իսկ *kat բաղադրիչը նույնն է հետևյալ բառերի *կատ*- արմատի հետ: Դրանք են. *կատար* (<կատ-ար) «գագաթ», *կատիկ* (<կատ-իկ) «մակալեզու», *կատաղունի* (<կատ-աղ-ունի) «եկեղեցու վերնատուն»⁹, որոնց միջոցով կոռուցվում է **կատ* արմատի նախնական «վերին, բարձրի» իմաստը¹⁰: Պատմական (ըստ «Աշխարհացոյցի»-ի) Շիրակ, Վանանդ և Արշարունիք գավառների սահմանագլխին գտնվող լեռնազանգվածը կրում էր *Արջոյ առիճ* անունը¹¹: Լեռնանվան առաջին մասը *արջ* բառի սեռական հոլովածն է, իսկ *առիճ*-ը կամ «գյուղ»¹² (լայնաբար՝ «բնակավայր» է նշանակում, կամ՝ «ամրոց, բերդ»¹³: Ըստ այսմ, Արջոյ առիճ լեռը եղել է արջի տոտեմական պաշտամունքի կենտրոն և Շիրակի, Վանանդի ու Արշարունիքի հարակից շրջաններով կազմել է սեպագրային Կաթարգա ցեղային երկիրը:

Ուրարտուի դեմ մարտնչած դաշնակից ցեղերից երկրորդը լուշան էր: ^{1/KUR}Luša ցեղային երկրի տեղորոշման հարցում ևս տարբեր տեսակետներ գոյություն ունեն: Ընդունելի կարելի է համարել նրա մոտավոր տեղորոշումը Երիախիից (կենտրոնական Շիրակում) արևմուտք և Արաքս-Ախուրյան գետախառնի շրջանից հյուսիս¹⁴: Եթե ճշգրտենք, ապա Լուշան ևս գտնվել է Ախուրյանի ավազանում, Կաթարգայից հյուսիս-արևմուտք՝ Շիրակին հարող կենտրոնական Վանանդում: Դա պարզ երևում է Արգիշտի I-ի (մ.թ.ա. 786-764 թթ.) Էթիունիի դեմ ձեռնարկած արշավանքներից մեկի նկարագրությունից, երբ նա Դիաուխիից (հետագա Տայք) նախ մտել էր Լուշա, ապա՝ Կաթարգա, իսկ հետո այս երկուսից արևելք գտնված Էրիախի¹⁵:

3. Լուշա և Լուխիունի երկրանունների ստուգաբանությունը

Այսպիսով, վերանում է Լուշա ցեղային երկիրը հետագա Լոռիի տարածքում տեղադրելու հնարավորությունը, որն առաջարկվել էր Luša (կարդա՝ *Լուսս*) և *Լոռի* (<Լառի) տեղանունների թվացյալ հնչյունական նմանության հի-

⁷ YKH, № 127, V, չժՊՔ, հ. I, էջ 42:

⁸ Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., Արարատի, Արագածի և մոտակա լեռների սեպագրային անունների շուրջ, ԳԱԱ ՇՀՀԿ, հ. XII, Եր., 2009, էջ 59:

⁹ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. II, Եր., 1973, էջ 536, 537, 538:

¹⁰ Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 59:

¹¹ Երենյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (այսուհետև՝ «Աշխարհացոյց»), Եր., 1963, էջ 40:

¹² ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 258:

¹³ Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Եր., 1936, էջ 36, ծան. 1:

¹⁴ ТУ, стр. 131.

¹⁵ YKH, № 127, V.

ման վրա¹⁶: Վերանում են նաև Լուշան հետագա Օաղկոտն գավառում (Հայկական պարից հարավ) տեղադրելու վերաբերյալ եղած և Luša-ն տեղի միջնադարյան իշխողների *Աղուզ* անվանը կապող ենթադրությունները¹⁷: Հնարավոր չէ նաև տարածքային և հնչյունական տեսակետներից հիմնավորումներ գտնել ցույց տալու համար վրացական (քարթվելական) *լազ* ցեղանվան (Սև ծովի հարավարևելյան ափին) և *Լուշա* ցեղանուն-երկրանվան միջև¹⁸ որևէ կապի գոյությունը: Հիմնավոր չէ նաև ենթադրությունը լուշա ցեղի (և նրա դաշնակից կաթարգա, վիտիբուխի ցեղերի) հին վրացական/քարթվելական ծագման վերաբերյալ¹⁹:

Սեպագրային ^{L/KUR}Luša անվան հիմքում մենք տեսնում ենք հայերեն *լոյս* «լույս» բառը (սեպագր. ս//հայ. *n, nj, nl*, իսկ թ//հայ. *u*)²⁰: Հայերեն *լոյս* բառը ծագում է հ.-ե. *louk- նախաձևից. հմմտ. հին հնդկ. rōka- «լուսավոր», ruči «լույս», ավեստ. raočah- «լույս, փայլ», հին պարս. raučah «լույս, օր», հուն. λευκός «փայլուն, լուսավոր, պայծառ, սպիտակ», իւեթ. luk «լուսավորել», լատին. lux «լույս» և այլն²¹: Luša ցեղանուն-երկրանվան հիմքում, մեր կարծիքով, համապատասխան դիցանունն է՝ կազմված *լոյս* «լույս» արմատից –այ վերջածանցով. հմմտ. բորայ «բորենի», երայ «որսի կենդանի», կրայ «կրիա», պախրայ, իսկ *Luša//Լուսայ դիցանվան համար՝ արքայ, մօրայ «խորթ մայր», յօրայ «խորթ հայր» բառերը, մանավանդ՝ *Արայ* դիցանունը:

Հ.-ե. *louk- արմատն ունեցել է իր *louq-/*luq- տարբերակները, որոնցից կարող էր ծագել սեպագրությամբ ավանդված ^{URU}Lušuni²² <*luh-iu-(ni) տեղանվան *luh- բաղադրիչը²³: Այսպես էր կոչվում էթիունի ցեղամիության մասը կազմած Էրիբուախի երկրի կենտրոնատեղին, որը գտնվում էր Մեծ Մասիսի հյուսիսային լանջին, հետագա Ցոլակերտի մերձակայքում²⁴: Մովսես Խորենացու բերած ավանդազրույցի համաձայն, Հայկազն Ամասիան՝ Արամանյակի թոռը, այստեղ երկու տուն (այս դեպքում՝ ամրոց) էր կառուցել. «զմին յարեւելս կոյս,

¹⁶ **Վարազդեզյան Յ.**, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և յարակից նահանգներում). Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում (այսուհետև՝ Վարազդեզյան), հ. I, գիրք 1, Եր., 1998, էջ 113, 160-161: Լոռի < Լոռի (<*լօռ-ի) տեղանունը բաղկացած է լօռ<լաւռ արմատից և -ի տեղանվանակերտ վերջածանցից: Լօռ նշանակում է «մամուռ», «թաց տեղեր աճող մի տեսակ խոտ», որից՝ լօռուտ «լոռ շատ բուսած տեղ» (ՀԱԲ, հ. II, էջ 308):

¹⁷ «Աշխարհացոյց», էջ 51:

¹⁸ **Меликишвили Г.А.**, К истории древней Грузии, Тб., 1959, стр. 67, 210-212.

¹⁹ **Дьяконов И.М.**, նշվ. աշխ., էջ 143:

²⁰ Նույն տեղում, էջ 221, ծան. 282: **Վարազդեզյան**, էջ 227:

²¹ ՀԱԲ, հ. II, էջ 295:

²² УКН, №№ 31, 32.

²³ **Վարազդեզյան**, էջ 125:

²⁴ ТУ, стр. 130-131, 260.

մօտ յակունս աղբերցն, որ առ ստորոտով լերինն ելանեն, իսկ զմիւսն յարեւմուտ կոյս նորին տանն... եւ ետ զնոսա ի ժառանգութիւն երկուց որդոյ իւրոց՝ արւոյն Փառոխի եւ կայտառին Յուլակայ. յորս բնակեալ իւրեանց անուն զտեղիսն կոչեցին ի Փառոխայ՝ Փառախոտ եւ ի Յուլակայ՝ Յուլակերտ»²⁵: Այս նույն տարածքում հայտնաբերված Մենուա թագավորի (մ.թ.ա. 810-786 թթ.) արձանագրություններից պարզվում է, որ նա այստեղ ամրոց է կառուցել և իր անունով կոչել Մենուախինիլի²⁶: Ենթադրում են, որ դա կարող է Յուլակերտը²⁷ կամ նախկին Լուխիու(նի)ն լինել²⁸: Կարծում ենք, թե ավանդագրույցի հետևությամբ այդտեղ երկու իրար մոտ, բայց և տարբեր ամրոցներ ենք տեսնելու, Մենուախինիլին Յուլակերտն է, իսկ Լուխիունին՝ Փառախոտը:

Անանուն պատմիչը գիտե Փառոխին և նրա բնակավայր Փառոխտը՝ Փառախոտը, բայց չգիտե Յուլակին և նրա Յուլակերտը: Իսկ սա կարող է արդյունքը լինել Փառախոտի առավել հայտնի լինելու հանգամանքի. այդպիսին էր սեպագրային Լուխիունին: Ըստ Անանուն պատմիչի՝ Փառոխի անունով «Փառոխտ կոչեն զտեղի բնակութեանն, եւ Փառականն դաշտ որսոց եւ արշաւանաց նոցին»²⁹: Վերջին հանգամանքն ավելի է շեշտում Փառոխի (և նրա Փառախոտի) կարևորությունը՝ Յուլակի (և նրա Յուլակերտի) համեմատ: Ավանդագրույցի եղբայրներից Փառոխը թե՛ իր նստավայրի արևելյան դիրքով և թե՛ իր անվամբ բացահայտում է իր առասպելաբանական նախատիպի արևային բնույթը³⁰: *Փառոխս<փառ-ոխ>* անվան առաջին բաղադրիչը *փառ* բառն է, որը «փայլ» է նշանակում (հմմտ. արմատի կրկնությամբ *փարփառ* «զեղեցիկ և վառվառն աչքեր ունեցող»)՝ իսկ *-ոխ* բաղադրիչը նաև «աչք» է նշանակել (հմմտ. *ոխ* «քեն, վրեժ» բառը՝ ծագած հ.-ե. *ok^h- «տես» արմատից)³²:

Եղբայրներից Յուլակն իր անվամբ բացահայտում է իր առասպելաբանական նախատիպի կայծակեղեն բնույթը³³, որովհետև *Յուլակ<ցու-ակ>*՝ «ցուլացող ակ», անունն իմաստով նույնն է ինչ և «կայծակ» նշանակող *կայծ-ակն* և *փայլ-*

²⁵ Մովսիսի Խորենացույ պատմութիւն Հայոց, Եր., 1981, գիրք Ա, գլ. Ժբ:

²⁶ YKH, №N° 31, 32.

²⁷ Կարազեօղեան, էջ 125:

²⁸ TY, стр. 130-131.

²⁹ Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, Եր., 1939, գլ. Ա, էջ 7:

³⁰ Պետրոսյան Ս.Գ., Վաղուրարտական դիցարանի գլխավոր եռյակը (Ուլքե՞ր են Բուդինի հավաքածուի ընծայական թիթեղին պատկերված աստվածները), ԳԱ ՇՀՀԿ «ԳԱ», հ. VIII, Գյումրի, 2005, էջ 34:

³¹ ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 491:

³² Джаукян Г. Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, стр.122, 271.

³³ Պետրոսյան Ս. Գ., Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 39-40:

ակն բառերը³⁴: Բացի դրանից, *ցուակ* բառը այդ նշանակությամբ է մուտք գործել «Ցուակ ջան, ցո՛ւ տու գնա» պարերգ, որն սկսվում է «Ամպի մեջ լորիկ թռավ» նախադասությամբ³⁵: *Ցոլ տալ, ցուլալ* նշանակում է՝ «շողալ, փայլել», «լուսի ճառագայթների թռչելը, պեծպեծին տալը», իսկ արմատի կրկնությամբ ունենք *ցուլցուլալ* «ցուլալ, շարունակ այս ու այնտեղ ցուլալ, փայլփլել»³⁶: Բերված նշանակությունները առանց երկմտելու կարելի է վերագրել նաև կայծակին: Սրբուհի Լիսիցյանի կարծիքով, «Ցուակ ջան», «Ցուակի» կոչված ժողովրդական պարեղանակների պարային շարժումները բնորոշ են վերվերի պարերի տեսակին և հիշեցնում են կրակից թռչկոտող կայծեր, բոցի արձակումներ³⁷:

Սեպագր. *Լսիս(ու)* տեղանվան *լսի* բաղադրիչը, ծագած լինելով «լուս» նշանակող արմատից, իմաստով առավել մոտ է *Փառոխ* և *Փառախոտ/Փառոխտ* անունների *փառ-* բաղադրիչին: *Լսի-ու-ու-*ի վերջին բաղադրիչը բուն տեղանվանը չի պատկանում (հավելվել է ուրարտ. սեպագր. մեջ), իսկ *-ու-* բաղադրիչը ևս հնդեվրոպական ծագում ունի: Հնդեվրոպական նախալեզվի **(i)ā* վերջածանցը³⁸ Հայկական լեռնաշխարհին վերաբերող տեղանուններում խեթ. արձանագրությունները վերարտադրել են *-ija*, իսկ ուրարտ. և ասորեստ. Սրձանագրությունները՝ *-ia* ձևով (հմմտ. *Alziia*, *Arniia*, *Arziia*, *Maldiiia* և *Alia*, *Alluria*, *Alqania*, *Arşania* և այլն): Հ. Կարազյոզյանի կարծիքով՝ ուրարտական սեպագրությամբ *-ու* հայտնի վերջավորությամբ տեղանուններում առկա է նույն տեղանվանակերտ վերջածանցի սեռական հոլովաձևը՝ *-ia>-ու* //հայ. *-իս*³⁹: Ըստ այսմ, *Լսիս(ու)* տեղանվան ուղղական հոլովաձևը ունեցել է **Luhia* տեսքը: Թե՛ *-ia*, թե՛ *-ու* տեղանվանակերտ վերջածանցները հետագա հայերենում վերածվել է պարզ-*ի* հնչյունի. հմմտ. *Այլի*, *Կարբի*, *Կումայրի*, *Լոռի*, *Հաղի*, *Ուշի*, *Փարպի* և այլն: Ուշադրության է արժանի Անանուն պատմիչի այն հաղորդումը, որ Մափսի ստորոտին է գտնվել որսատեղի և ձիարշավարան հանդիսացած *Փառախան* անունով դաշտը: Այստեղ անվան *փառ-* բաղադրիչի կապը վերոհիշյալ *փառ* բառի և *Փառոխի* անվան հետ, կարծես, հուշում է, որ այն ձևված է եղել *Փառոխի* նախատիպ արևի աստվածությանը (ձին, մանավանդ՝ թևավոր ձին, արևի աստծու սրբազան կենդանին և նրա խորհրդանիշն էր)⁴⁰:

4. Վանանդ և Երեւել տեղանունների ստուգաբանությունը

³⁴ Պետրոսյան Ս. Գ., Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 39-40:

³⁵ «Երգարան», կազմեց Վ. Սամվելյան, Եր., 1949, էջ 334:

³⁶ Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. IV, Եր., 1945, էջ 468:

³⁷ Лисициан С., Старинные пляски и театральные представления армянского наорда, т. I, Ер., 1958, стр. 321-322.

³⁸ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 231:

³⁹ Կարազեղեան, էջ 125, 126, 264:

⁴⁰ Իսրայելյան Ս., Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Եր., 1971, էջ 72-73:

Մեպագր. Luša և Luhiu(ni) երկրանունների իմաստակիցն է նաև *Վանանդ* տեղանունը: Ըստ Մովսես Խորենացու՝ անվանակիր գավառը նախապես հայտնի է եղել «Անփայտ եւ Վերին Բասեան» անունով⁴¹: Ըստ երևույթին, նախապես *Վանանդ* կոչվել է նույն Լուշան, իսկ հետո անունը տարածվել է ամբողջ գավառի վրա: Այս տեղանունը ևս բնիկ հայկական է՝ կազմված **վան-անդ* բաղադրիչներով: Վերջինս առկա է Հայկական լեռնաշխարհի ուրիշ տեղանուններում ևս (հմմտ. *Բագրեւանդ, Եռանդ, Չարաւանդ*//սեպագր. *Zaranda, Հարանդ//Համբանդ, Մարանդ, Վարանդա*): Ըստ երևույթին, այս տեղանվանակերտը ծագում է *-անդ* վերջածանցից՝ առկա *արանդ* «կոճղեզ», *արգանդ, դրանդ, եռանդ-ն, հիւանդ, արգաւանդ* բառերում: *Վանանդ* տեղանվան *վան-*ի առթիվ նկատենք, որ հայերենն ունի *վան* «բյուրեղ» բառը, որից էլ՝ *վանի* «բյուրեղյա», *վանակն* «բյուրեղացած կվարց, ապակու նման թափանցիկ մեծ բյուրեղ» (հմմտ. «Վանակնն մեծ պայծառ լուսաւորութեամբն»)՝⁴²: Վերջինիս առթիվ Անանիա Շիրակացին գրում է. «ասեն...եթէ *վանակն* պայծառ լուսաւորութեամբն եւ պաղպաղակն մաքուր եւ յստակ գեղեցկութեամբն՝ նման են *լուսաւորութեան* օդոյ եւ ջրոյ»⁴³: Այս նույն *վան* բառն է ընկած *Վանանդ* տեղանվան հիմքում⁴⁴: Եթե ուրարտ. Մեպագրությանը ավանդված ^{KUR}Biani երկրանունը, իրոք, վերաբերում է Վանանդին (Biani/*վան)⁴⁵, ապա այն պետք է համարել իմաստակիցը Luša/**Լուսայ* տեղանվան և նույնպես տեղադրել Վանանդի արևելքում:

Այս երկուսի իմաստակիցն է և նույն տարածքին է վերաբերում նաև *Երեւել* դաշտի անունը: 387թ. իրադարձությունների կապակցությամբ, երբ իրար դեմ էին ելել Հայոց երկու թագավորները՝ Արշակ III-ը և Խոսրով IV-ը, Մովսես Խորենացին հաղորդում է հետևյալը. «(Խոսրովը) ոչ այնչափ ատակեաց աճապարել՝ մինչեւ եզիտ զԱրշակ իջեալ յիր սահմանս ի գաւառին Վանանդայ: Եւ պատահեն միմեանց ի դաշտին որ կոչի *Երեւել*. եւ տան պատերազմ ընդ միմեանս սաստիկ յոյժ»⁴⁶: Շիրակ գավառին սահմանակից դաշտի *Երեւել* <*երեւ-ել* անվան մեջ *երեւ-//արեւ*: Ինչպես հայտնի է հայերենում *p* և *n* բաղաձայններին նախորդող *ե* և *ա* ձայնավոր հնչյունները կարող էին հերթագայել՝ ստեղծելով

⁴¹ Խորենացի, Բ, գ:

⁴² ՀԱԲ, հ. IV, էջ 303: Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. IV, էջ 298: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. II, Եր., 1981, էջ 781:

⁴³ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Եր., 1940, էջ 5:

⁴⁴ Պետրոսյան Լ.Ս., Արևի և լույսի պաշտամունքի արտացոլումները Վանանդում, ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ (Քրիստոնեության 1700-ամյակին նվիրված), Եր., 2001, էջ 31: Պետրոսյան Ս.Գ., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 98, 100:

⁴⁵ Գայսերյան Վ., Մեպագիր աղբյուրներում հանդիպող մի քանի երկրների տեղադրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1985, թիվ 1, էջ 213-214:

⁴⁶ Խորենացի, Գ, խգ:

այնպիսի տարբերակված գույգեր, ինչպիսիք են. *երագ/արագ, երասան-ակ/անասան-ակ, երաստ/արաստ, Երգինա/Արգինա, Երուանդ/Արուանդ*: Մեր կարծիքով, *արեւ* բառի տարբերակ **երեւ*-ը ևս պատկանել է հայոց լեզվի բառապաշարի «սրբագան» բառաշերտին: Երկու դեպքում էլ նկատի է առնվել լույսի պաշտամունքը, որն իր արտացոլումն է մասնավորապես գտել Սատուրն մոլորակին հին հայերի տված *Երեւակ* (<երեւ-ակ) անվան մեջ⁴⁷: Սրա բուն իմաստը «լուսատու» է եղել (հմմտ. *Լուսին<լոյս>*-ին, այսինքն՝ «լուսատու»): *Երեւել* տեղանվան մեջ նախորդ անվան *-ակ* վերջածանցի փոխարեն **երեւ*- հիմքին հավելվել է *-ել* վերջածանցը (հմմտ. *անծեղ//անձեղ, բորեղ, գոռեղ, տառեղ-ն* բառերում առկա նույնական վերջածանցները): Անտարակույս, Վանանդի այս դաշտը *Երեւել* կոչվել է լույսի պաշտամունքի ճանաչված կենտրոն լինելու պատճառով:

5. *Կուլիա և Դուրուբանի տեղանունների ստուգաբանությունը*

Արգիշտի I-ի արձանագրություններից մեկը՝ փորագրված Արագածի հյուսիս-արևմտյան լանջին գտնվող Սպանդարյան գյուղի հարավկողմի ձորում, պատմում է Կուլիա (Կուլիական) ցեղի նվաճման և նրա երկրի Դուրուբանի (^{URU}Durubani) կենտրոնի գրավման մասին⁴⁸: Այս տեղանունը, մեր կարծիքով, արտացոլում է հ.-ե. **Dorubhān*- նախաձևը, որից հայ. *տորբան* «վարդապետություն» բառը. հ.-ե. **d>*հայ. տ, հ.-ե. **bh>*հայ բ. և նախաշեշտ միջնաձայն *ու*-ի սղում⁴⁹: *Տորբան* բառի առթիվ Հ. Աճառյանը գրում է. «Պետք է կարծել, որ կազմված է *տոր + բան* «խոսք» բառերից, բայց անհայտ է *տոր*»⁵⁰: Վերջինս պետք է արմատակիցը լինի *տարգալ* «փայտե գդալ», *տոռն* «սանդի կոթ», *տորգ* «ծանր բաներ վերցնելու գլանաձև փայտ» և այլն, մանավանդ *տրամ* «ամուր, պինդ, հաստատուն» բառերի⁵¹: Ըստ Հ. Աճառյանի՝ *տրամ*-ը «բուն նշանակում է «փայտի պես ամուր» (նրանից ունենք *տրամաբանություն* բառը՝ արդեն հոգևոր նշանակությամբ) և ծագում է հ.-ե. **dru-rā /-mo-* «ամուր» նախաձևից⁵²: Իմաստային զարգացման նույնպիսի ուղիներ են անցել նաև մեր բառերի արմատակիցները ազգակից լեզուներում. հմմտ. հին հնդկ. *dhruvā* «հաստատուն, ապահով, տևական», պարս. *durust* «ողջ, ամբողջ, ուժեղ, առողջ», հին իռլ. *derb* «ապահով, վստահ» անգլ.-սաքս. *trēow* «հավատարմություն, ճշմարտություն, հավատք»,

⁴⁷ Ըստ երևույթին, Երևակ լուսատուի անունը արեւ բառի նման ծագում է հ.-ե. **reu-* արմատից, այլ ոչ թե, ընդունված կարծիքի համաձայն (ՀԱԲ, հ. II, էջ 46-47, 49), երեւիլ/երեւալ և երես բառերի նման՝ հ.-ե. **prep-* արմատից:

⁴⁸ YKH, № 132.

⁴⁹ Պետրոսյան Ս.Գ., Պետրոսյան Լ.Ս., Սեպագրային DURUBANI/հայերեն տորբան, ՎՊՄԻ հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2009, էջ 65-69:

⁵⁰ ՀԱԲ, հ. IV, էջ 422:

⁵¹ Նույն տեղում, էջ 384, 421, 422, 434:

⁵² Նույն տեղում, էջ 433-434:

պրուս. drwis «հավատք», կելտ. druides «քրմեր» նայլն⁵³: *Տորբան* <doru-bhān բառի երկրորդ բաղադրիչը նս հայերենի հնդեվրոպական միջուկին պատկանող բառերից է ծագած հ.-ե. *bhā «խոսել»-ից. հմմտ. հուն. φάμα «ձայն, աստվածների հայտարարությունը», լատին. fabula «խոսք, զրույց, առակ», գերմ. bannen «կախարդական խոսքով կապել», հին սլավ. balija «կախարդ»⁵⁴: Այսպիսով, *տորբան* «վարդապետություն» բառի բուն նշանակությունը եղել է «հաստատուն խոսքով (մարդ)», «հավատի խոսքը (կրող)»: Ըստ այսմ, պետք է ենթադրել, որ *տորբան* (<տորուբան<*doru-bhān) կոչվել է կուլիա/կուլիական ցեղի քուրմ-արքան, որից էլ նրա նստավայրի սեպագրային Durubani անունը:

Իսկ ի՞նչ պաշտամունքի կենտրոն էր Արագածի լանջի այս բնակավայրը, որի իրագործողը եղել է տեղական քուրմ-արքան: Կարծում ենք՝ դա եղել է լուսի պաշտամունքը: Այս տեսանկյունից ուշադրության են արժանի Լուսավորչի մշտավառ կանթեղի մասին մեզ հասած ավանդազրույցները: Հնագույն Շիրակի բնակիչների համար Արագածը լուսի աղբյուր էր: Ավանդազրույցներից մեկի համաձայն՝ «Երբ Գրիգոր Լուսավորիչը աղոթելիս է լինում Արագած լեռան կատարին, նրան գիշերը լուսավորում է մի կանթեղ, անպարան (առանց պարանի) կախված երկնքից: Ասում են, թե այդ կանթեղը այժմ էլ կա, միայն տեսանելի է արժանավորներին»⁵⁵: Մեկ ուրիշ ավանդություն *Սպարան* գավառի անվան առաջացումը բացատրում է Լուսավորչի արցունքներով լի կանթեղի՝ երկնքից *անսպարան* կախված լինելու հանգամանքով⁵⁶: Որ վերջին ավանդությունը նախնադարից եկած ակունքներ է ունեցել, հուշում է Ապարան գավառի հին հայկ *Նիգ* (նան *Նիգատուն*) անունը, որովհետև հին հայերենում *Նիգ* բառը ոչ միայն «լինգ» էր նշանակում, այլև «ձողաձև կամ գերանաձև լույս, որ երևում է ամպերում»⁵⁷: Ավելացնենք, որ Արագածի սրբազան լուսի համբավը համահայկական ընդգրկում է ունեցել: Այդ իսկ պատճառով է լեռան անունը հանդես գալիս հին հայկական տոմարում՝ որպես 20-րդ օրվա անուն: Բնականաբար, ամսի այդ օրը ձոնված է եղել լեռան և նրա սրբազան լուսի պաշտամունքին:

6. Ուիշուշի երկրի տեղորոշումը և անվան ստուգաբանությունը

Իր Խորխոռյան տարեգրության մեջ Արգիշտի I-ը Էրեբունի ամրոցի հիմնադրումը նկարագրելուց հետո պատմում է դեպի հյուսիս արշավանքի մասին. «Հենց այդ նույն տարում արշավեցի Ուրուրդա (երկրի) վրա: Իշ[●] լուրուրա ար-

⁵³ Նույն տեղում, էջ 434: **Гамкрелидзе Т., Иванов В.**, Индоевропейский язык и индоевропейцы, т. I-II, Тб., 1984, т. II, стр. 613.

⁵⁴ ՀԱԲ, հ. IV, էջ 422:

⁵⁵ **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Եր., 1969, էջ 368:

⁵⁶ Նույն տեղում, էջ 346, թիվ 384^ա:

⁵⁷ **Պետրոսյան Օ.Ս.**, Արագածը ջրի և լուսի զուգորդված պաշտամունքի վայր, «ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ», Գյումրի, 1999, էջ 105-106:

քային (և) Ուբուրդա-ալխե երկիրն իր գրավեցի: Երդուա քաղաքն արքայական գրավեցի, Վիշուշե (երկիրը) հպատակեցրի (?): Մարդ, կին հանեցի այնտեղից: Արշավեցի Խախիա (երկրի) վրա»: Ամրոցները ավերեցի, քաղաքներն այրեցի»⁵⁸: Լույսի պաշտամունքի ևս մեկ կենտրոն եղել է հիշյալ երեք ցեղային երկրներից Վիշուշին՝ ^{KUR}Սիսուսի: Նրանց տեղադրության վերաբերյալ տարբեր տեսակետներ են առաջադրվել: Ըստ Ն. Հարությունյանի՝ դրանք գտնվել են Արևմտյան Եփրատի վերնագավառում, իսկ դրանցից Խախիան իր անվամբ նույնանում է Եկեղեաց գավառի Խախ բնակավայրի (Երզնկայի մոտակայքում) հետ⁵⁹: Դրանց տեղորոշումը Արևմտյան Եփրատի վերնագավառում կամ Ասորեստանի մոտերքում (ինչպես կարծում է Գր.Ղափանցյանը)⁶⁰ հակասում է Արգիշտի I-ի հաղորդմանը, որովհետև այնտեղ խոսքը Էթիունիի երկրների մասին է: Ըստ այսմ, իրավացի է Հ.Կարապոզյանը, որն այդ երկրներից առաջինի համար ծանոթագրում է. «Ուբուրդա-երկիր հետագայի Գուգարքի Տաշիր գավառում»⁶¹:

Եթե Ուբուրդան Տաշիրն է, ապա Վիշուշի և Խախիա երկրները գտնվելու էին նրանից արևելք, իսկ Խախիան՝ որպես արշավանքի ծայրակետ, ավելի արևելք, քան Վիշուշին: ^{KUR}Հահիա երկրանունը, մեր կարծիքով, ուղղակի կապի մեջ է Հախում լեռնանվան և գետանվան հետ: Հահիա < *Հահ-իա, իսկ Հախում < *Հախ-ում: Ի նկատի առնենք, որ Հահիա-ն կարող էր և Հախիա հնչել, որովհետև սեպագր. *h//h, /x*: Ինչպես վերևում տեսանք -իա տեղանվանակերտը հանդիպում է ուրարտական դարաշրջանի բազմաթիվ տեղանուններում և իր ժառանգորդն ունի ի դեմս *Լոռի, Կարբի, Կումայրի, Փարպի* և այլ տեղանունների -ի վերջածանցի: Հահիա երկրանվան, Հախում լեռնանվան և գետանվան հիմքերի նույնությունը հուշում է, որ անվանակիր սեպագրային երկիրը պետք է գտնվեր Հախում լեռնաշղթայի և գետի տարածքում՝ Հախում և Աղստև գետերի ջրբաժանի շրջանը ներառյալ:

Ուբուրդայի և Խախիայի տեղադրությունների ճշտումով հնարավոր է դառնում ճշտելու նաև նրանց միջև գտնված Վիշուշի/^{KUR}Սիսուսի երկրի տեղադրությունը, որն այդպիսով ընդգրկելու էր Սևանա լիճը հյուսիս-արևելքից եզերող Արեգունի լեռնաշղթան: Ըստ երևույթին, Էրեբունիի հիմնադրումից հետո ուրարտական բանակը ներկայիս Աշտարակ-Ապարան-Սպիտակ ուղղությամբ ներխուժել էր Ուբուրդա (Տաշիր), որտեղից Վանաձոր-Դիլիջան ուղղությամբ հայտնվել էր Վիշուշիում, ապա՝ Իջևան-Բերդ ուղղությամբ մտել Խախիա (հե-

⁵⁸ УКН, № 127, II, ՀԺՊՔ, հ. I, էջ 60:

⁵⁹ ТУ, стр.196, 204, 227-228.

⁶⁰ Капанцян Гр., Историко-лингвистические работы к начальной истории армян. Древняя Малая Азия, Ер., 1956, стр. 111.

⁶¹ ՀԺՊՔ, հ. I, էջ 67, ծան. 27:

տագա Տուս//Տուս-քուստակ գավառի տարածք)⁶²: Արեգունի լեռնանունը բաղկացած է *Արեգ* «արև» արմատից և *-ունի* վերջածանցից (հմմտ. *արքունի, ծերունի, տիկնունի*): Լեռնանվան իմաստը «արեգային, արևային» է: Մեր կարծիքով, *Արեգունի*-ն իմաստային կրկնությունն է անվանակիր լեռնաշղթան ընդգրկած երկրի սեպագիր անվան: Սիսուսի//**Uisos*-**ues*-*os* հնդեվրոպական ծագումով բաղադրիչներից բաղկացած այս երկրանվան առթիվ հիշենք, որ սեպագիր թ-ն՝ սովորաբար վերարտադրել է *s* հնչյունը, իսկ սձ հնչյունակապակցության դեպքում պետք է ի նկատի առնել *os* արտասանությունը (Դušpa//Տոսպ-այ, Սškia//** Ոսկի, «Ոսկյա»*):

Սիսուսի երկրանվան Սիձ- բաղադրիչի **ues*- արտասանությունը թույլ է տալիս նրա հիմքում տեսնել *h*-*ե*. **ues*- «լուսավորել, այրել» արմատը: Այս արմատով կազմված և լուսավոր երևույթներ ու աստվածություններ նշող բառեր կան հնդեվրոպական մի շարք լեզուներում: Դրանցից են հին հնդկ. *vāsara* «առավոտյան», «օր», *avasran* «նրանք լուսավորեցին», հուն. *έως* «արշալույս, լուսաբաց», «օր», *Ηώς* «Արշալույսի դիցուհին», լատին. *Vesta* «օջախի դիցուհին» և այլն⁶³: Երկրանվան *-us*-//**-os*- բաղադրիչը ծագում է *h*-*ե*. **(H)ons*- նախաձևից: Սրանում *s*-ին նախորդած ռնգային հնչյունի անկման համար հմմտ. *w-ufhu* < *h*-*ե*. **mens*-, *ufhu* < *h*-*ե*. **mēms*-, *nu* < *h*-*ե*. **oms*-⁶⁴ : Հ.-ե. **(H)ons*-ի **(H)ns*- տարբերակը (ստորին ձայնադարձ) ևս իր ժառանգ բառերն ունի հնդեվրոպական ազգակից լեզուներում. հմմտ. հայ. աստուած (<**աս*-տիւ-ած), իւեթ. *hašsu* «արքա», ավեստ. *ahū* «տեր», *ahūra* «տիրակալ, տեր, իշխան» (հմմտ. *Ahūra-Mazda* «Արամազդ աստված»՝ բառացի «Տեր իմաստուն»), հին հնդկ. *ásura* «աստված», «ոգի, բարձրագույն էակ», հին իռլ. *áss* «աստված», գոթ. *ansēs* «կիսաաստվածներ», հին անգլ. *ós* «աստված»⁶⁵:

Եթե սեպագրային Սիսուսի անվան մեջ լույսի անձնավորում աստծու **Ues*-*os*- «Լույս տեր» կամ «Լույսի տեր» մակդիրն է, ապա կարելի է ենթադրել, թե ^{KUR}Սիսուսի երկրանունը նշանակել է «Լույս(ի) տիրոջ երկիր», իսկ այս երկրանվան իմաստակից Արեգունի (<Արեգ-ունի) լեռնաշղթայի անունը ցույց է տալիս, որ խոսքը հայոց հնագույն Արեգ աստծո մասին է: Նրան էր ձոնված և նրա *Արեգ* անունն էր կրում Հայկական տոմարի յուրաքանչյուր ամսի և յուրաքանչյուր տարվա առաջին օրը, ուրեմն, նաև ժամանակի հաշվարկն սկզբնավորած առա-

⁶² Հմմտ. «Աշխարհացոյց», էջ 82, 86, 105, 109, 111:

⁶³ **Гамкредидзе Т., Иванов В.**, նշվ. աշխ., հ. I, էջ 223:

⁶⁴ **Հյուրզման Հ.**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1990, էջ 57: ՀԱԲ, հ. I, էջ 157-158, հ. III, էջ 323-324, 609:

⁶⁵ **Гамкредидзе Т., Иванов В.**, նշվ. աշխ., հ. II, էջ 750: **Պետրոսյան Ս.**, *Աս արմատով բառերի պաշտամունքային բնույթի մասին, ՇՊՄԺ հանրապետական 7-րդ գիտ. նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 60-66:

ջին օրը: Իսկ այս օրն սկսվել է լույսով և լույսի կողմից խավարի հաղթահարումով ու վանումով: Ըստ այդմ, *Արեգ* դիցանվանը վերագրվել են հետևյալ իմաստները. «*Արեգ*-մեծ, կամ առաել, կամ լոյս, կամ խիստ, կամ քաջ» և «*Արեգ*-խիստ, կամ քաջ»⁶⁶:

Քաջ-ը հեթանոսական Վահագն աստծու մակդիրն էր, իսկ նրա նախատիպը նույն Արեգ աստվածն էր, որի անունը անագրամայով հանդես է գալիս հետագայում Վահագնին վերագրված հայտնի օրհներգում («եւ աչկունք էին *արեգակունք*»/«և աչիկներն էին *Արեգի աչքեր*»): Միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում *արեգակն* բառին տրված է հետևյալ մեկնաբանությունները. «*Արեգակն*-լուսով, կամ լուսոյ ակն, կամ լուսով լցեալ, կամ մեծ ակն»⁶⁷: Հ. Աճառյանը նկատել էր տալիս, որ «Ընտիր հայերենի մեջ արեգակն և արև նշանակության կողմից զանազանվում են նրանով, որ *արեգակն* աստղն է, իսկ *արև* նրա լուսար»⁶⁸: Արեգակի և լույսի փախկապակցությունը առավել հստակ ձևակերպել է Լեոն: Նա գրում է. «Լուսը անձնավորում էր մի աստվածության մեջ, որ կոչվում էր *Արփի*, *Արեգ* կամ *Արև*, և ցերեկային լուսատու գունդն էլ՝ այդ աստվածության մարմնացումը, ընդունվում էր իբրև նրա աչք, և կոչվում էր *Արեգակն* կամ *Արևակն*»⁶⁹:

Եզրահանգում. Էթիունիի տարածքից բերված քննարկվող տեղանունների շարքը՝ Luša, Luhiu(ni), Durubani, Uišušī, Վանանդ, Երեւել, Փառախոտ/Փառոխոտ, Փառական, Նիգ, Արեգունի, խոսում է նրանում լույսի պաշտամունքի երբեմնի գոյության մասին, իսկ դրանց ստուգաբանություններով հաստատվում է Էթիունիի հնդեվրոպական-հայկական բնույթը:

ЭТИУНСКИЕ МЕСТА ПОЧЕТАНИЯ СВЕТА

Петросян С.Г.

Ключевые слова: племя, страна, союзник, Этиуни, Урарту, локализация, этноним, топоним, этимология, солнечный.

Царь Урарту Ишпуини и царевич Менуа в двух клинописных надписях рассказывают о нападении трех этиунских племен - витирухи, луша, катарза на Урарту. Эти племена были соседями Эриахи с запада. Из этих племен луша и их страна занимали центральную часть исторического Вананда. В основе этноним-

⁶⁶ Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ.Մ. Ամալյանի, Եր., 1975, էջ 37, 371, ծան. 892:

⁶⁷ Բառգիրք հայոց, էջ 37:

⁶⁸ ՀԱԲ, հ. I, էջ 311:

⁶⁹ Լեո, Երկեր, հ. I, Եր., 1966, էջ 269:

топонима Luša//Lusa лежит армянское слово индоевропейского происхождения լոյս «лцц» (свет).

Корень топонима Luša//Lusa наличествует в топониме Luhiuni, центрального населенного пункта этиунской страны Эрикуахи.

Смысловые параллели топонима Luša представляли имена гавара Вананд и долины Еревел. Для первого ср.: клинописное название страны Biani и арм. слово ванакн (վանակն) - "кристаллизованный кварц, большой кристалл, похожий на стекло". А для второго ср.- арм. слово արև (арев) "солнце" и корень երև (ерев, <и.-е. *reu-) в имени Երեւակ (Еревак – планета Сатурн).

“Ниг” - название древнеармянского гавара, который занимал северо-восточные склоны горы Арагац и его подгорья. Слово “ниг” в грабаре обозначает не только "лом", но и "свет, показавшийся в облаках". По преданию, на вершине Арагаца находилась вечносветящая лампа Григора Просветителя. По имени жрецов, которые осуществляли почитание языческого прототипа этой вечносветящей лампы, по нашему мнению, и назван населенный пункт Durubani на западном склоне Арагаца.

В 782 г. до н. э. царь Урарту Аргишти I после основания Эребуни совершил поход на север и у озера Севан покорил страны Убурда, Вишуши, Хахия. Страна Uišuši//Uisusi локализуется на нынешнем Арегунийском хребте и его окрестностях. Ср.: Арег-уни արեգակն (арегакн) - "солнце". В основе имени Uis-us-i, по нашему мнению, лежит и.-е. прототип *ues-os- в смысле "повелитель света".

ETIUNI PLACES OF LIGHT CULT

Petrosyan S.G.

Key words: *tribe, country, alley, Etiuni, Urartu, localization, ethnonym, toponym, etymology, solar.*

Ishpuini King of Urartu (825-810 BC) and Prince Menua in their two cuneiform inscriptions inform us about the back attack of three Etiun tribes - Vitirukhi, Lusha, Katarza. Those tribes were the resident tribes of Eriakhi's neighbouring western districts. Of the mentioned tribes Lusha and their country occupied the central part of historical Vanand. The bases of Luša//Lusa ethnonym-toponym is of the Armenian word of Indo-European origin լոյս “light”. The root of the toponym Luša//Lusa is present in the toponym Luhiuni, the central settlement of the Etiunian country of Erikuahi.

The meaningful parallels of the toponym Luša were represented by the names of the Vanand province name and the valley of Yerevel. For the first cuneiform name comp. of the country Biani and Armenian word vanakn (վանակն) “crystallized quartz, a large crystal is like glass” and for the second cf. Armenian word արև (arev) “the sun” and the root երև (yerev, <I. -E. *reu-) in the name Երեւակ (the Saturn planet).

Nig is the name of the ancient Armenians who occupied the northeastern slopes of Mount Aragats and its foothills. The word Nig in the old Armenian means not only “crow”, but also “light appeared in the clouds”. According to the legend, on the top of Aragats there was an everlasting lamp of Grigor Loosavorich (the Illuminator). By the name of the priests who venerated the pagan prototype of this ever-luminous lamp, in our opinion, the settlement Durubani on the western slope of Aragats was named.

In 782 BC Argishti I, the King of Urartu, after founding Erebuni, made a trip to the north from Lake Sevan and conquered the countries of Uburda, Vishushi, and Khakhia. The country of Uišušī//Uisusi is located on the present Areguni Range and its surroundings: Մրէզ -նւնի, comp. արեգակն (“sun”). The name Uis-us-i, in our opinion, is based on I.-E. prototype * ues-os- in the sense of “Lord of the Light”.

References

1. **Acharyan H.**, Hayeren armatakan bararan, h. I, Yer., 1971, h. II. Yer., 1973, h. IV, Yer., 1979 (in Armenian).
2. **Adonts N.**, hayastani patmutyun. Akunqnerə X-VI dd. m.t.a., Yer., 1972 (In Armenian).
3. **Anania Shirakatsi**, Tiezeragitutyun yev tomar, Yer., 1940 (in Armenian).
4. **Arutyunyan N.V.**, Toponimika Urartu, Yer., 1985 (In Russian).
5. «Bargirq hayots», Qnnakan bnagirə, arajabanə yev tsanotagrutyunnerə H.M. Amalyani, Yer., 1975 (in Armenian).
6. **Dyakonov I.M.**, Predistoria armyanskogo naroda. Istoriya Armyanskogo Nagorya s 1500-500 g. do n. e., Yer., 1968 (In Russian).
7. **Gamkrelidze T.V.**, Ivanov V.V., Indoevropeskiy yazik i indoevropeytsi, t. I-II, Tb., 1984 (In Russian).
8. **Gayseryan V.**, Sepagir aghbyurnerum handipogh mi qani yerkrneri teghadrutyunə// «Patmbanasirakan hands», 1985, tiv 1 (in Armenian).
9. **Ghanalanyan A.**, Avandapatum, Yer., 1969 (in Armenian).
10. «Hay zhoghovrdi patmutyan qrestomatia», h. I., Yer., 1981 (in Armenian).
11. **Hmayakyan S.G.**, Etiune erkirə yev «Viterukhe-Lusha-Qatarza» dashnutyunə// «Shiraki patmamshakutayin zharangutyunə», hanrapetakan yerrord gitazhoghovi zekutsumneri himnadruytner, Gyumri, 1998 (in Armenian).
12. **Hyubshman H.**, Hayagitakan usumnasirutyunner, Yer., 1990 (in Armenian).
13. **Israyelyan M.**, Erebuni berd-qaghaqi patmutyun, Yer., 1971 (in Armenian).
14. **Jahukyan G.B.**, hayots lezvi patmutyun. Nakhagrayin zhamanakashrjan, Yer., 1987 (in Armenian).
15. **Jahukyan G.B.**, Ocherki po istorii dopismennogo perioda armyanskogo yazika, Yer., 1967 (In Russian).
16. **Kapantsyan G.A.**, Istoriko-lingvisticheskie raboti k nachalnoy istorii armyan. Drevnaya Malaya Aziya, Yer., 1956 (In Russian).

17. **Karageozean Y.**, Sepagir teghanunner (Ayraratum ev harakits nahangnerum), «Haykakan lernashkharhə sepagir aghbyurnerum», h. I, girq 1, Yer., 1998 **(in Armenian)**.
18. **Lisitsyan S.**, Starinniye plyaski i teatralniye predstavleniya armyanskogo naroda, t. I, Yer., 1958 **(In Russian)**.
19. **Manandyan H.**, Hin Hayastani glkavor chanaparhnerə əst Pevtingeryan qartezi, Yer., 1936 **(in Armenian)**.
20. **Malkhasyanc S.**, Hayeren batsatrakan bararan, h. IV, Yer., 1944 **(in Armenian)**.
21. **Melikishvili G.A.**, K istorii drevney Gruzii, Tb., 1959 **(In Russian)**.
22. **Melikishvili G.A.**, Urartskie klinoobraznie nadpisi, M., 1960 **(In Russian)**.
23. «Movsesi Khorenacvoy patmutyun Hayots», Yer., 1981 **(in Armenian)**.
24. «Nor bargirq haykazean lezui», Yerkasirutyun H.G. Avetiqean, H. Kh. Siurmelean, H. M. Avgerean, Yer., 1981 **(in Armenian)**.
25. **Petrosyan S. G.**, *As armtov bareri pashtamunqayin bnuyti masin// «ShPMZh hanrapetakan 7-rd git. nstashrjani nyuter», Gyumri, 2007 **(in Armenian)**.
26. **Petrosyan S. G.**, Daserə yev yeradasutyun drsevorunnerə hin Hayastanum, Yer., 2006 **(in Armenian)**.
27. **Petrosyan S. G.**, Hayots mehenagrutyun akunqnerum, Gyumri, 2008 **(in Armenian)**.
28. **Petrosyan S. G.**, Sepagrayin UIȚIRUȚI yerki yev nra teghoroshman masin// HH GAA ShHH kentroni «Git. ashkhatutyunner», h. XXI, Gyumri, 2018 **(in Armenian)**.
29. **Petrosyan S. G.**, Vaghurartakan ditsarani glkavor eryakə (Ovqer en Budini havaqatsui əntsayakan titeghin patkervats astvatsnerə)// HH GAA ShHH kentroni «Gitakan ashkhatutyunner», Gyumri, 2005 **(in Armenian)**.
30. **Petrosyan S. G.**, Petrosyan L.S., Ararati, Aragatsi yev motaka lernerı sepagrayin anunnerı shurj// HH GAA ShHH kentroni «Git. ashkhatutyunner», h. XII, Yer., 2009 **(in Armenian)**.
31. **Petrosyan S. G.**, Petrosyan L.S., Sepagrayin DURUBANI/hayeren *turban* //«VPMI hanrapetakan gitazhoghovi nyuter», Vanadzor, 2009 **(in Armenian)**.
32. **Petrosyan Ts. S.**, Aragatsə jri yev luysi zugordvats pashtamunqi vayr// «GPMI hanrapetakan gitakan nstashrjani zekutsumnerı himnadruytner», Gyumri, 1999 **(in Armenian)**.
33. «Sebeosi episkoposi patmutyun», Yer., 1939 **(in Armenian)**.
34. **Yeremyan S. T.**, Hayastanə əst «Ashkharhatsoyts»-i, Yer., 1963 **(in Armenian)**.
35. «Yergaran», kazmets Samvelyan V., Yer., 1949 **(in Armenian)**.

Ընդունվել է՝ 21.10. 2019

Գրախոսվել է՝ 02.11. 2019

Հանձնվել է տպ՝ 21.11. 2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր,

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների

կենտրոնի առաջատար գիտաշխատող, էլ. փոստ՝ vahe1996@mail.ru